ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

595555
www.unibank.am

Գործարքներ քարտով

Բանկի քարտերի միջոցով կարող են կատարվել անկանխիկ վճարումներ և փոխանցումներ, ինչպես նաև կանխիկացումներ բանկոմատների, POS տերմինալների, վճարային տերմինալների և առցանց կայքերի միջոցով:

Բանկի բանկոմատները սպասարկում են բանկոմատի վրա պատկերված լոգոտիպով վճարահաշվարկային համակարգերը:

Բանկի քարտերով վճարումներ կարող եք կատարել ArCa և Visa քարտերով՝ վճարման դաշտում համապատասխան լոգոտիպը նշված լինելու դեպքում:

Քարտապանները կարող են Բանկի կողմից թողարկված ArCa քարտի միջոցով առցանց անկանխիկ վճարումներ կատարել՝ գրանցելով վիրտուալ ArCa քարտը www.arca.am կայքում:

Քարտով կատարված գործարքների գումարները քարտային միջոցներից սառեցվում են անմիջապես, իսկ քարտային հաշվից ելքագրվում են 1-15 օրացուցային օրվա ընթացքում՝ կախված գործարքի տեսակից և սպասարկող վճարահաշվարկային համակարգից: Գործարքի վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում 16-րդ օրացուցային օրը գործարքի միջոցները վերականգնվում են քարտապանի քարտային հաշվին:

Քարտով կատարված գործարքների վերաբերյալ բողոքարկումները կարող են ներկայացվել գործարքի կատարման օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում: Բողոքարկումների պատասխանը տրվում է բողոքարկումը Բանկ մուտքագրելուց հաջորդող 35 օրացուցային օրվա ընթացքում:

3D Secure համակարգով սպասարկվող կայքերից առցանց գնումների կամ վճարումների դեպքում անհրաժեշտ է ակտիվացնել sms ծառայությունը՝ կայքում գործարքի հաստատման համար պահանջվող գաղտնաբառը ստանալու համար:

◆ ◆ ◆

Խորհուրդ է տրվում՝ *քարտ ստանալիս ներկայացնել նաև քարտով գործարքների մասին հեռախոսային հաղորդագրության ակտիվացման դիմում՝ գործարքների մասին մշտապես տեղեկացված լինելու և գաղտնաբառերը ստանալու համար:*

Անվտանգության կանոններ

Արգելվում է քարտը օգտագործել անօրինական նպատակով: Քարտապանի կողմից անօրինական գործարք կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել հատուցել դրա հետևանքով իր կրած վնասները:

Քարտի կորստի, հափշտակության կամ մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման դեպքում Քարտապանը պարտավոր է անհապաղ ծանուցել Բանկին և/կամ սպասարկող վճարահաշվարկային համակարգին այդ մասին՝ հայտնելով իր գաղտնաբառը, որի արդյունքում քարտով գործարքները կասեցվում են՝ քարտի բլոկավորման միջոցով:

Բանկը պատասխանատվություն կարող է կրել Քարտապանին հասցված վնասների համար,եթե Քարտապանը Բանկին տեղեկացրել է քարտը կորցնելու, հափշտակության կամ մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման մասին, որից հետո Բանկը չի ձեռնարկել համապատասխան քայլեր քարտով հետագա գործարքների կասեցման համար:

Քարտի կորստի դեպքում վերաթողարկվում են քարտը և PIN կոդը՝ Քարտապանի կողմից քարտի վերաթողարկման մասին գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:

Քարտի, PIN կոդի և գաղտնաբառի օգտագործման ռիսկը կրում է քարտապանը:

Քարտի PIN կոդը, CVV կոդը կամ գաղտնաբառը այլ անձին հայտնի դառնալու կասկածի դեպքում անհրաժեշտ է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին:

PIN կոդը հավաքելիս եղեք ուշադիր այլ անձանց կողմից տեսանելի չլինելու կամ չտեսագրվելու համար:

Բանկոմատով կամ POS-տերմինալով գործարքներ կատարելիս ստուգեք բանկոմատի կամ POS-տերմինալի տված անդորրագրերի գումարների համապատաս-

խանությունը փաստացի կատարված գործարքների գումարներին:

PIN կոդը 3 անգամ անընդմեջ սխալ հավաքելու դեպքում քարտը բլոկավորվում է և առգրավվում բանկոմատի կողմից:

Քարտը բանկոմատից դուրս գալուն հաջորդող 30 վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու դեպքում բանկոմատը այն կրկին տրամադրելուց հետո առգրավվում է:

Քարտի առգրավման դեպքում բանկոմատի էկրանին հայտնվում է քարտի առգրավման մասին հաղորդագրությունը: Քարտի առգրավման դեպքում քարտապանը պետք է անմիջապես հայտնի այդ մասին Բանկին՝ զանգահարելով (+374 10) 555 385 հեռախոսահամարով:

Բանկի բանկոմատների կողմից առգրավման դեպքում Քարտապանը առգրավված քարտը կարող է ստանալ Բանկի մասնաճյուղից կամ Գլխամասային գրասենյակից (ք. Երևան, Չարենց 12)՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա 2-10 աշխատանքային օրվա ընթացքում:

◆ ◆ ◆

Քարտի հետ կապված հարցերի դեպքում կամ մանրամասների համար կարող եք զանգահարել շուրջօրյա գործող (+374 10) 555 385 հեռախոսահամարով:

Հանձնված է տպագրության 25.02 2019

Սահմանումներ՝

Բանկ՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն,

Քարտ՝ Բանկի կողմից թողարկված և սպասարկվող վճարային գործիք, որի միջոցով կարող են կանխիկացվել դրամական միջոցներ, կատարվել անկանխիկ փոխանցումներ և վճարումներ,

ArCa քարտ (ԱրՔա քարտ)՝ Բանկի կողմից թողարկվող և ArCa վճարահաշվարկային համակարգի միջոցով սպասարկվող վճարային քարտ,

Visa քարտ (Վիզա քարտ)՝ Բանկի կողմից թողարկվող և Visa միջազգային վճարահաշվարկային համակարգի միջոցով սպասարկվող վճարային քարտ,

Քարտապան՝ Բանկի հետ կնքված «Քարտի տրամադրման և սպասարկման պայմանագրի» հիման վրա Բանկում քարտային հաշվի սեփականատեր և քարտի օգտագործման իրավունք ունեցող ֆիզիկական անձ (16 տարին լրացած), իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,

Հիմնական քարտ՝ առանձին քարտային հաշվով սպասարկվող քարտ, որի քարտապանի (հիմնական քարտապան) դիմումի հիման վրա վերջինիս կողմից նշված սահմանաչափով այլ անձանց (կից քարտապան) ևս կարող է տրամադրվել քարտային հաշվի միջոցների օգտագործման իրավունք,

Կից քարտ՝ հիմնական քարտապանի քարտային հաշվի միջոցներով սպասարկվող վճարային քարտ (կից քարտը քարտային հաշիվ չունի), որի քարտապանը կարող է լինել ֆիզիկական անձ (14 տարին լրացած),

Անանուն քարտ՝ առանց քարտապանի տվյալների քարտ, որտեղ քարտապանի անվան ազգանվան փոխարեն կարող է տպվել քարտի հաշվեհամարը կամ այլ վավերապայման,

PIN-կոդ կամ անհատական նույնականացման համար՝ վճարահաշվարկային համակարգի կողմից ավտոմատ գեներացվող ծածկագիր, որը կիրառվում է քարտով գործարքներ իրականացնելիս՝ հաճախորդների նույնականացման համար,

Գաղտնաբառ՝ հաճախորդների կողմից սահմանված գաղտնաբառ, որն օգտագործվում է հաճախորդների սպասարկման ընթացքում նրանց նույնականացման համար, այդ թվում հեռախոսազանգերի միջոցով սպասարկման, իսկ ArCa վճարահաշվարկային համակարգում նաև վիրտուալ քարտերի գրանցման համար,

Ավտոմատ գանձման մեքենա (ԱԳՄ կամ բանկոմատ)՝ քարտով կանխիկ գումարը ստանալու և անկանխիկ գործարքներ կատարելու համար նախատեսված սարքավորում,

POS տերմինալ՝ Բանկի մասնաճյուղերում կանխիկ գումարը ստանալու, իսկ մասնաճյուղերից դուրս անկանխիկ գործարքներ կատարելու համար նախատեսված սարքավորում:

Դիմերես | Դարձերես

1. Բանկի լոգոտիպ և անվանում
2. Քարտապանի անուն ազգանուն
3. Չիպ (չիպային քարտերի դեպքում)
4. Քարտի համար
5. Քարտի գործողության վերջնաժամկետ՝ ամիս/տարի
6. Վճարահաշվարկային համակարգի լոգոտիպ
7. Քարտի տեսակ
8. Մագնիսական ժապավեն
9. Ստորագրության դաշտ
10. CVV Կամ CVC կոդ
11. Բանկի հետ կապի միջոցների տվյալներ

Ընդհանուր դրույթներ

Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և տրամադրվում է Հաճախորդին Քարտի վրա նշված օգտագործման ժամկետով:

Քարտը գործում է մինչև քարտի դիմերեսին նշված գործողության ժամկետի ամսվա վերջին օրացուցային օրը ներառյալ:

Քարտի սպասարկման նպատակով քարտապանի անունով բացվում են բազմարժութային քարտային հաշիվներ՝

ՀՀ դրամով (AMD), ԱՄՆ դոլարով (USD) և Եվրոյով (EUR):

Բազմարժութային քարտով կատարված գործարքների գումարների գանձումը քարտային հաշիվներից կատարվում են հետևյալ սկզբունքով

- գումարը գանձվում է նախ քարտապանի սեփական միջոցներից, ապա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ վարկային հաշիվներից՝ առկայության դեպքում,
- գումարների գանձման հաշիվների հաջորդականությունը ըստ արժույթների հետևյալն է՝ ՀՀ դրամ (AMD), ԱՄՆ դոլար (USD) և Եվրո (EUR):

Եթե գործարքի արժույթը համապատասխանում է քարտային հաշիվներից որևիցէ մեկին, ապա համակարգը գործարքի գումարը գանձում է տվյալ արժույթի դեբետային հաշվից, եթե տվյալ արժույթի դեբետային հաշվին առկա չէ սեփական միջոց կամ անբավարար է, ապա գումարի անբավարար մասը գանձվում է մյուս հաշիվներից՝ ըստ արժույթի առաջնայնության AMD, USD, EUR, ապա դեբետային հաշիվներին գումարի անբավարարության դեպքում՝ վարկային հաշվից, բացառությամբ «ՎՏԲ Հայաստան» (VTB Armenia), «Հայբիզնեսբանկ» (ABB) և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» (HSBC Armenia) բանկերում կատարված գործարքների, որոնց հաշվանցումը կատարվում է ստորև նշված սկզբունքով:

Եթե քարտով գործարքի արժույթը AMD, USD, EUR արժույթներից տարբեր է, ապա համակարգը VISA վճարային համակարգում գործարքի գումարը, որը մշտապես արտացոլվում է ԱՄՆ դոլարով, փոխարկում է գումարը ՀՀ դրամի՝ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով, և գանձում գործարքի գումարը ըստ առաջնայնության՝ AMD, USD, EUR հաշիվներից:

Գործարքի և հաշվանցման օրերը տարբեր են, ուստի Բանկի կողմից սահմանված առք ու վաճառքի փոխարժեքի փոփոխման հետևանքով դրամային հաշվին կարող է առաջանալ գերածախս (օվերլիմիտ), որի գծով ձևավորվում են պարտավորություններ:

Խորհուրդ է տրվում՝ արտարժույթի փոխարկման ժամանակ, կորուստներից խուսափելու նպատակով, քարտային հաշիվը համալրել գործարքի արժույթի համապատասխան արժույթով:

Բանկի քարտերը սպասարկվում են ArCa և Visa վճարային համակարգերի լոգոտիպ ունեցող բանկոմատների և POS տերմինալների կողմից:

Բանկի կողմից տրամադրված ArCa քարտերը սպասարկվում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքում:

Բանկը երաշխավորում է Քարտապանի և քարտով կատարված գործարքների մասին տեղեկատվության գաղտնիությունը, և կարող է տրամադրել երրորդ անձանց բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Քարտի թողարկում, տրամադրում և վերաթողարկում

Բանկի կողմից քարտը թողարկվում է հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ Բանկի կողմից սահմանված բոլոր վճարումները կատարելու դեպքում:

Քարտը և PIN կոդը քարտապանին տրամադրվում են առանձին-առանձին՝ Բանկի տարբեր աշխատակիցների կողմից: PIN կոդը տրամադրվում է փակ ծրարով, ուստի ստանալիս ստուգեք PIN կոդի ծրարի փակ և ամբողջական լինելը, ինչպես նաև քարտի համապատասխանությունը:

PIN կոդը հայտնի է միայն քարտապանին և մոռանալու դեպքում թողարկվում է նոր PIN կոդ:

Արգելվում է PIN կոդը պահել քարտի հետ, նշել քարտի վրա կամ որևէ այլ կերպով հայտնի դարձնել երրորդ անձանց:

Քարտը Բանկից ստանալուն պես Քարտապանը պարտավոր է ստորագրել քարտի դարձերեսին՝ ստորագրման դաշտի վրա: Քարտի դարձերեսին քարտապանի ստորագրությունը նախատեսված է քարտապանի նույնականացման համար, և ստորագրության առկայությունը պարտադիր է:

Քարտապանի կողմից քարտը թողարկման հաջորդող 90 օրվա ընթացքում չստանալու դեպքում այն ոչնչացվում է:

Քարտով գործարքների անվտանգության ապահովման նպատակով Քարտապանի կողմից ներկայացված հաղորդագրությունների ակտիվացման դիմումի հիման վրա քարտով կատարված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ Քարտապանին ուղարկվում է հեռախոսային հաղորդագրություն (sms) կամ էլեկտրոնային նամակ, իսկ քարտային հաշվի շարժի վերաբերյալ՝ քաղվածք՝ Քարտապանի կողմից նշված կապի միջոցով:

Քարտի գործողության ժամկետը լրանալիս Բանկի կողմից քարտի երկարացման մասին հաճախորդին է ուղարկվում նամակ/հաղորդագրություն, և քարտի գործողության ժամկետը երկարաձգելու համար մինչ քարտի ժամկետը լրանալը Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի համապատասխան դիմում՝ վճարելով Քարտի ժամկետի երկարաձգման համար՝ համաձայն Բանկում գործող սակագների:

Բանկի կողմից քարտի վերաթողարկման դեպքում նոր քարտը տրամադրվում է հին քարտը Բանկին վերադարձնելուց հետո:

Քարտի ժամկետը լրանալուց հետո քարտը չվերաթողարկելու դեպքում՝ 5 բանկային օրվա ընթացքում այն պետք է վերադարձվի Բանկ, իսկ քարտային հաշվին դրամական միջոցների առկայության դեպքում այն փոխանցվում է Քարտապանի դիմումի մեջ նշված հաշվեհամարին: